ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» հոկտեմբերի 2015թ. **N-----Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարի 2015 թվականի ապրիլի 09-ի թիվ 01/01/1759/15 գրությունը և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 71-րդ հոդվածի 3-րդ մասով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

Տալ համաձայնություն «Ինտեր ասոցիացիա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման 18.03.2009 թվականի հ.2564494 վկայական) և Գոհար Վանիկի Առաքելյանին (անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման 18.03.2009 թվականի հ.2564495 վկայական) բաժնային սեփականության իրավունքով պատկանող Երևան քաղաքի Զաքյան փողոցի հ.5/3 և 5/4 հասցեներում գտնվող 0.04501 հա մակերեսով հողամասից 0.03811 հա հողամասը Երևան համայնքի սեփականությունը հանդիսացող Երևան քաղաքի Զաքյան փողոցի հ. 5 հասցեի հարևանությամբ գտնվող 0.011414 հա մակերեսով հողամասի հետ փոխանակելու համար:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարի 2015 թվականի ապրիլի 09-ի թիվ 01/01/1759/15 գրության համաձայն՝ Երևան քաղաքի Վազգեն Սարգսյան հ. 3 հասցեում կառուցվող վարչական նոր համալիրի գլխավոր հատակագծով նախատեսված վարչական մասնաշենքերին և քաղաքային նշանակության «Պուրակ» ենթակայանին սպասարկող ճանապարհներն իրականացնելու նպատակով անհրաժեշտություն է առաջացել ապամոնտաժել Երևան քաղաքի Զաքյան փողոցի հ. 5/4 հասցեում Գոհար Վանիկի Առաքելյանին և «Ինտեր ասոցիացիա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը պատկանող շինությունը: Միաժամանակ տեղեկացվել է, որ սեփականատերերի հետ ձեռք է բերվել նախնական պայմանավորվածություն կնքվող պայմանագրի հիման վրա փոխել վերջիններին պատկանող հողամասի չափերը և եզրագծերը և ապամոնտաժվող շինության փոխարեն սահմանված կարգով համաձայնեցված նախագծի հիման վրա, նոր եզրագծով հողատարածքի սահմաններում կառուցել համալիրի շինարարության ծրագրերում ընդգրկված, նույն մակերեսով շինության հիմնակմախքը և հանձնել սեփականատերերին:

Համաձայն Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 71-րդ հոդվածի 3-րդ մասի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001թ. ապրիլի 12-ի հ. 286 որոշմամբ հաստատված կարգի 32-րդ կետի՝ համայնքի վարչական սահմաններում, համայնքի սեփականությունը հանդիսացող հողամասերը փոխանակվում են համայնքի ավագանու համաձայնությամբ՝ համայնքի ղեկավարի որոշման հիման վրա:

Վերը նշվածի հիման վրա սույն նախագծով առաջարկվում է «Ինտեր ասոցիացիա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման 18.03.2009 թվականի հ.2564494 վկայական) և Գոհար Վանիկի Առաքելյանին (անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման 18.03.2009 թվականի հ.2564495 վկայական) բաժնային սեփականության իրավունքով պատկանող Երևան քաղաքի Զաքյան փողոցի հ.5/3 և 5/4 հասցեներում գտնվող 0.04501 հա մակերեսով հողամասից 0.03811 հա հողամասը փոխանակել Երևան համայնքի սեփականությունը հանդիսացող Երևան քաղաքի Զաքյան փողոցի հ. 5 հասցեի հարևանությամբ գտնվող 0.011414 հա մակերեսով հողամասի հետ:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Հողամասերի փոխանակությանը համաձայնություն տալու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտի ընդունման անհրաժեշտություն չկա։

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Հողամասերի փոխանակությանը համաձայնություն տալու մասին» որոշման նախագիծը ընդունելու կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չեն սպասվում։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ